№ 1 Յունվարի 15 (27) 1880 Յունվարի 15 (27) № 1

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլի։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» իններորդ տարին։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Ֆելիետօն։

«ՄՇԱԿԻ» ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

«Մշակը մտնում է իր գոյութեան իններորդ շրջանը։

Իր գոյութեան առաջին տարուց սկսած մինչև այժմ մեր թերթի գործունէութեան հորիզօնը հետզհետէ լայնանում էր և ընդարձակվում էր։

Մենք չենք կամենում կրկնել մեր անցեալ տարիների սասածները, չենք կամենում նորից ութ տարվայ ընթացքում մեր բոլոր յարուցած և քննած հարցերի տեսութիւնն անել, կը յիշենք միայն թէ ինչ ենք արել անցեալ 1879 թվին, ինչով ենք գլխաւորապէս պարապել անցեալ տարին, ինչ քայլ է արել «Մշակը» դէպի առաջ։

Երևակայեցէք ձեզ, ընթերցող, որ երեք հարազատ եղբայրներ մանկութեան հասակից, առանց միմեանց ճանաչելու, հանդամանքների շնորհով, հեռացել են միմեանցից և թէև հասակ են առել,—դարձեալ բաժանված և միմեանց գրեթէ անծանօթ են ապրում այլ և այլ երկիրներում։ Այդ երեք եղբայրները թէև սիրում են միմեանց, կուզենային միմեանց բարոյապէս օգնել, կուզենային միմեանց օգնել և նիւթապէս, երբ որ նրանցից մինը դիցուք հիւանդ է, քաղցած է, ծարաւ է,—բայց մի կողմից շատ հեռու են ապրում միմեանցից և ուրիշ կողմից հնար չունեն փոխադարձապէս իւրաքանչիւրի դրութիւնը ճանաչելու։ Մանաւանդ եղբայրներից մինը, հանդամանքների շնորհով, ապրելով աւելի քաղաքակրթված երկրում, քան թէ միւս երկուսները, աւելի կրթված, աւելի ազատ և հարուստ լինելով, շատ կը ցանկանար իր կարողութեան չափ օգնել իր միւս երկու եղբայրներին, որոնք աւելի տգէտ և աղքատ են, բայց չէ կարող այդ անել, որովհետև ճիշդ տեղեկութիւն չունի նրանց մասին, չէ ճանաչում նրանց դրութիւնը, ուրեմն չէ էլ իմանում ինչով կարող է օգնել նրանց....Նա կամենում է, օրինակ գրքեր ուղարկել իր եղբայրների զաւակներին, բայց չը գիտէ ինչ հասակի և հասկացողութեան տէր են այդ մանուկները և ուրեմն ինչ տեսակ մանկական գրքեր պէտք է ուղարկել նրանց։ Նա ցանկանում է փողով օգնել իր արիւնակից մանուկների ուսմանը,—բայց չը գիտէ, անդամ, ունեն նրանք արդեօք դրպրոցներ իրանց երկրում։ Եղբայրները սոված են,—բայց աւելի ունևոր եղբայրը հեռաւոր երկիրների հետ կանոնաւոր յարաբերութիւնների բացակայութեան պատճառով շատ ուշ է տեղեկանում իր միւս եղբայրների նեղ դրութեան մասին, տեղեկանում է այն ժամանակ, երբ օգնութիւնը արդէն աւելորդ է լինում, և այլն....

կանչ չէ դնում իր լրագրութեան ձայնին, չէ հետևում լրագրի միջոցով յարուցված խնդիրներին,—վերջը միշտ պատժվում է,...

Հազար օրինակներ կարող էի բերել այստեղ իմ խօսքերը հաստատելու համար, բայց կը բաւականանամ մի օրինակով։ «Մշակը» դեռ 1872 թվին, այսինքն իր գոյութեան առաջին տարին խօսում էր հացի թանգութեան մասին, առաջարկում էր մի ջոցներ թշուառ պատահարներին առաջն առնելու, ցոյց էր տալիս թէ ինչպէս կարելի է գիւղացուն ազատվել չարչիների և զանազան հարստահարողների ձեռքից, հաստատելով գիւղական կրեդիտ և հիմնելով փոխատուխնայողական և գիւղական արդիւնաբերող ընկերութիւններ, տպեց այդ տեսակ ընկերութիւնների կանոնադրութիւններն անդամ....Բայց ոչ ոք չը լսեց «Մշակի» ձայնին, ոչ ոք չը հիմնեց ոչ փոխատու ընկերութիւններ, ոչ էլ հաստատեց քաղաքներում գիւղական արդիւնաբերող ընկերութիւնների պահեստներ, կամ ամբարներ,—և ահա այժմ, երբ շատ տեղերում հացի թանգութիւն և սով է յայտնվում, շատերը սկսեցին յիշել որ ութ տարի սրանից առաջ չը հետևեցին «Մշակի» խորհրդներին....

***

Մինչև այժմ հայը և ոչ թէ միայն ռամիկ կամ վաճառական հայը, այլ բարձր ուսում ստացած հայը լրագրին զրվել կենսական անհրաժեշտութիւն չէ համարում, այլ կարծում է որ մի տաս ռուբլ շպրտելով խմբագրին, ինչպէս մի ոսկոր քաղցած շան են շպրտում, բարերարութիւն է անում խմբագրին և ոչ թէ իրան օգուտ է բերում կարդալով ամենօրեայ թերթը և նրա մէջ գտնելով ուղղութիւն տուող յօդուածներ, գտնելով իր կենսական ամենաանհրաժեշտ խնդիրների լուծումն։ Կօշիկներ, գդակ, զգեստներ հագնել, ուտել խմել, մինչև պատամ շատերի համար թուղթ խաղալ և հարբել, քեֆ անել, դրանք հայը անհրաժեշտութիւններ է համարում, բայց լրագիր, այն էլ ամենօրեայ լրագիր կարդալը, որի մէջ նա մի կողմից գտնում է իր անհրաժեշտ կենսական խնդիրների լուծումն, իսկ միւս կողմից ինքն էլ կարող է նպաստել այդ խնդիրների ճիշդ վճռելուն, թերթակցելով լրագրին,—այդ շռայլութիւն է համարում հայը։

***

Եւ ոչ թէ միայն անկիրթ հայը այսպէս է մտածում, բայց և բարձր ուսում ստացած հայը....

Պատմում մի անցք ընթերցողին, որ հաստատում է իմ խօսքերը և որին ես ականատես եղայ։

Յունվարի 4-ին, Թիֆլիսի Գործակատարների կլուբում պ. Ա. Երիցեան մի դասախօսութիւն կարդաց հայերէն լեզուով։ Դասախօսութիւնը, փակագծի մէջ յիշեմ, բաւական լաւ էր, մանաւանդ եթէ բոլորը ճշմարիտ է, ինչ որ պատմեց պ. Երիցեանը։ «Մշակի» խմբագիրը, խմբագրութեան մի քանի անդամներ և ես ներկայ էինք պարոնի դասախօսութեանը։

Երբ դասախօսութիւնը վերջացաւ, պ. բժիշկ Ա. Բարայեան, նոյն Բաբայեանը, որ ընդմիջեց դասախօսին զանազան հարցեր առաջարկելով նրան, մօտենում է «Մշակի» խմբագրին և մեր ներկայութեամբ նրանց մէջ մօտաւորապէս հետևեալ խօսակցութիւն է լինում։

—Ա՛խ, շատ ուրախ եմ որ ձեզ այստեղ տեսնում եմ, խնդրեմ նշանակեցէք ինձ «Մշակի» բաժանորդ, ասում է պ. Բաբայեան։

—Ես չեմ կարող ձեզ այստեղ նշանակել, պատասխանում է խմբագիրը, ինչ կը դառնայ եթէ ինձ ամենքը դիմեն կլուբում, թատրոնում կամ փողոցում.... Ես այն ժամանակ պէտք է ինձ հետ մի ամբողջ հակ թուղթ մանեմ։ Վերջապէս ես այստեղ խմբագիր չեմ, ես մասնաւոր մարդ եմ։ Կարող էք գալ խմբագրատուն նշանակված ժամերը և այնտեղ դրվել։ Ձեզ խօ յայտնի է որտեղ է գտնվում խմբագրատունը։

—Լ՛Ս....Մէկ էլ ով է գնում խմբագրատուն.... բժիշկ եմ, զբաղված մարդ եմ....

—Ամեն մարդ մի որ և է բանով զբաղված է։ Իսկ եթէ դուք ինքներդ չէք կամենում գալ, կարող էք ձեր ծառային ուղարկել տոմսակով։

—Մէկ էլ ով է յիշում ծառայ ուղարկելու.... Ձեզ այստեղ տեսայ ու ասում եմ, վերջացնում է գիտնական բժիշկը։

—Ինչպէս կուզէք, կորուստս շատ շատ այն կը լինի, որ այս տարի ես մի բաժանորդ պակաս կունենամ, ասաց խմբագիրը, չուռ եկաւ և ուղևորվեց դէպի կլուբի սանդուխտը։

«Մշակի» խմբագիրը թէև սառն էր, բայց վերդոված էր երևում։ Իսկոյն երևում է որ մարդը ոչինչ չնորհ չունի ֆելիետոններ գրելու և Բաբայեանի պէս մարդիկներին ֆելիետոնական ձևով պատասխանելու։

Եթէ ես դրա տեղ լինէի, մտածեցի ես, կիմանայի թէ ինչպէս պատասխանեմ գիտնական բժշկին։ Ահա թէ ինչպէս կը պատասխանէի ես։

—Շատ լաւ, պ. բժիշկ, ես կը նշանակեմ ձեր անունը, բայց ես էլ շատ ուրախ եմ որ ձեզ այստեղ պատահեցի։ Վաղուց է արդէն որ գլուխս սաստիկ ցաւում է և գիշերներով փոքր ինչ տենդ ունեմ և բաւական քրտնում եմ, խնդրեմ նայեցէք լեզուս ու քննեցէք երակիս զարկը.... Եւ ամենքի առջև, բժշկի ծանօթների ու բարեկամների, կլուբի անդամների, հիւրերի ու ծառաների առջև լեզուս ցոյց կը տայի նրան։

Ի հարկէ բժիշկը վրդոված կը լինէր և անպատճառ կը բացականչէր։

—Ներեցէք, պարոն, դա անքաղաքավարութիւն է, այստեղ ես բժիշկ չեմ, ես մասնաւոր մարդ եմ, դուք կարող էք իմ տունս գալ, որտեղ ես նշանակված ժամերին հիւանդներին եմ ընդունում։

—Լ՛Ս, մէկ էլ ով է գնում ձեր տունը, կը պատասխանէի ես....

—Ինչպէս կուզէք, իրաւունք կունենար պատասխանել բժիշկ Բաբայեանը, կարող էք չը գալ, բայց ես դրանից կորուստ չունեմ....Այդպիսով դուք հիւանդ կը մնաք, իսկ ես շատ շատ այն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՅԿ-ԱՍՍՐ

3611-66

2013

ՖԵԼԻԵՏՕՆ

Շնորհաւոր նոր տարի։—Իմ ցանկութիւնները «Մշակին» և հայ ազգին։—«Обзоръ» լրագիրը։—Լրագրութեան նշանակութիւնը։ — «Մշակը» ինչ բաներ քարոզեց 1872 թվից սկսած։—Փոխատու և արդիւնաբերող ընկերութիւններ։—Թանգութիւն և սով։—Ինչպէս է նայում հայը լրագրի վրա։—Մի անցք գործակատարների կլուբում։—Բժիշկ Բաբայեան։—Ինչ կը պատասխանէի ես նրան։—Հայ խմբագրի վիճակը։—Խմբագիր և դերձիկ։—Ինչպէս էին վարվում հայոց նախկին խմբագիրները։—Անփոյթ յարաբերութիւնը դէպի ամեն բան։—Ինչ կը նշանակի պարտականց և պարտաճանաչ լինել։—Ընկերութիւններ, մասնաժողովներ, հոգաբարձութիւններ, Դումա։—Հոգաբարձու, տեսուչ, ուսուցիչ, աղվօկատ և բժիշկ։—Անցեալ տարվայ վերջերում պատահած երևելի անցքեր։—Աղամանի բենեֆիսը։ — Հեղեղ։— Մանղիեանի դասախօսութիւնը։—Ջարմանալի երկիր է Հայաստանը։—Մանկունի եպիսկոպոսը։

—

Ընթերցողին, թէև փոքր ինչ ուշ, շնորհաւորելով նոր տարի և ցանկանալով նոր բաղդ, սկսում եմ իմ ֆելիետոնս։ Ուրախ եմ շատ, որ ֆելիետոնս զետեղվում է «Մշակի» իններորդ տարվայ առաջին համարում։

Իմ սիրելի «Մշակին» ես ցանկանում եմ այս տարի շատ բաժանորդ ունենալ, իսկ ամեն մի հային և հայուհուն ես միայն մի բան եմ ցանկանում, այն է որ ամեն մի հայ և ամեն մի հայուհի ստանայ և կարդայ «Մշակը»։

Թող այս տարի յարութիւն առած ռուսաց «Обзоръ» լրագիրը այդ իմ խօսքը բէկլամ համարի, բայց ես կարծում եմ որ միայն այն ժամանակ մի ազգ բաղդաւոր կը լինի, երբ իր և իր օգուտներին ծառայող լրագրութեան մէջ ամենասերտ կապ կը հաստատվի։ Այն ազգը որ ա-

գտնում է իր անհրաժեշտ կենսական խնդիրների լուծումն, իսկ միւս կողմից ինքն էլ կարող է նպաստել այդ խնդիրների ճիշդ վճռելուն, թերթակցելով լրագրին,—այդ շռայլութիւն է համարում հայը։

***

Եւ ոչ թէ միայն անկիրթ հայը այսպէս է մտածում, բայց և բարձր ուսում ստացած հայը....

Պատմում մի անցք ընթերցողին, որ հաստատում է իմ խօսքերը և որին ես ականատես եղայ։

Յունվարի 4-ին, Թիֆլիսի Գործակատարների կլուբում պ. Ա. Երիցեան մի դասախօսութիւն կարդաց հայերէն լեզուով։ Դասախօսութիւնը, փակագծի մէջ յիշեմ, բաւական լաւ էր, մանաւանդ եթէ բոլորը ճշմարիտ է, ինչ որ պատմեց պ. Երիցեանը։ «Մշակի» խմբագիրը, խմբագրութեան մի քանի անդամներ և ես ներկայ էինք պարոնի դասախօսութեանը։

Երբ դասախօսութիւնը վերջացաւ, պ. բժիշկ Ա. Բարայեան, նոյն Բաբայեանը, որ ընդմիջեց դասախօսին զանազան հարցեր առաջարկելով նրան, մօտենում է «Մշակի» խմբագրին և մեր ներկայութեամբ նրանց մէջ մօտաւորապէս հետևեալ խօսակցութիւն է լինում։

—Ա՛խ, շատ ուրախ եմ որ ձեզ այստեղ տեսնում եմ, խնդրեմ նշանակեցէք ինձ «Մշակի» բաժանորդ, ասում է պ. Բաբայեան։

—Ես չեմ կարող ձեզ այստեղ նշանակել, պատասխանում է խմբագիրը, ինչ կը դառնայ եթէ ինձ ամենքը դիմեն կլուբում, թատրոնում կամ փողոցում.... Ես այն ժամանակ պէտք է ինձ հետ մի ամբողջ հակ թուղթ մանեմ։ Վերջապէս ես այստեղ խմբագիր չեմ, ես մասնաւոր մարդ եմ։ Կարող էք գալ խմբագրատուն նշանակված ժամերը և այնտեղ դրվել։ Ձեզ խօ յայտնի է որտեղ է գտնվում խմբագրատունը։

—Լ՛Ս....Մէկ էլ ով է գնում խմբագրատուն.... բժիշկ եմ, զբաղված մարդ եմ....

—Ամեն մարդ մի որ և է բանով զբաղված է։ Իսկ եթէ դուք ինքներդ չէք կամենում գալ, կարող էք ձեր ծառային ուղարկել տոմսակով։

—Մէկ էլ ով է յիշում ծառայ ուղարկելու.... Ձեզ այստեղ տեսայ ու ասում եմ, վերջացնում է գիտնական բժիշկը։

—Ինչպէս կուզէք, կորուստս շատ շատ այն կը լինի, որ այս տարի ես մի բաժանորդ պակաս կունենամ, ասաց խմբագիրը, չուռ եկաւ և ուղևորվեց դէպի կլուբի սանդուխտը։

«Մշակի» խմբագիրը թէև սառն էր, բայց վերդոված էր երևում։ Իսկոյն երևում է որ մարդը ոչինչ չնորհ չունի ֆելիետոններ գրելու և Բաբայեանի պէս մարդիկներին ֆելիետոնական ձևով պատասխանելու։

Եթէ ես դրա տեղ լինէի, մտածեցի ես, կիմանայի թէ ինչպէս պատասխանեմ գիտնական բժշկին։ Ահա թէ ինչպէս կը պատասխանէի ես։

—Շատ լաւ, պ. բժիշկ, ես կը նշանակեմ ձեր անունը, բայց ես էլ շատ ուրախ եմ որ ձեզ այստեղ պատահեցի։ Վաղուց է արդէն որ գլուխս սաստիկ ցաւում է և գիշերներով փոքր ինչ տենդ ունեմ և բաւական քրտնում եմ, խնդրեմ նայեցէք լեզուս ու քննեցէք երակիս զարկը.... Եւ ամենքի առջև, բժշկի ծանօթների ու բարեկամների, կլուբի անդամների, հիւրերի ու ծառաների առջև լեզուս ցոյց կը տայի նրան։

Ի հարկէ բժիշկը վրդոված կը լինէր և անպատճառ կը բացականչէր։

—Ներեցէք, պարոն, դա անքաղաքավարութիւն է, այստեղ ես բժիշկ չեմ, ես մասնաւոր մարդ եմ, դուք կարող էք իմ տունս գալ, որտեղ ես նշանակված ժամերին հիւանդներին եմ ընդունում։

—Լ՛Ս, մէկ էլ ով է գնում ձեր տունը, կը պատասխանէի ես....

—Ինչպէս կուզէք, իրաւունք կունենար պատասխանել բժիշկ Բաբայեանը, կարող էք չը գալ, բայց ես դրանից կորուստ չունեմ....Այդպիսով դուք հիւանդ կը մնաք, իսկ ես շատ շատ այն

Որքան, ուրեմն, օգտակար կը լինէր երեք եղբայրների համար էլ միմեանց դրութիւնը փոխադարձապէս ուսումնասիրելու և ճանաչելու:

Սորան նման դրութեան մէջ գտնվում են հայերը Ռուսաստանում, Թիւրքիայում և Պարսկաստանում: Նրանք միմեանց գրեթէ չեն ճանաչում, տեղեակ չեն փոխադարձապէս իրանց կենսական պիտոյքների մասին:

Ռուսաստանի հայը իր մնացած եղբայրներից, Թիւրքիայի և Պարսկաստանի հայերից աւելի բաղդաւոր, աւելի ապահով, աւելի ազատ, աւելի հարուստ և աւելի կրթված է: Նա կուզենար օգնել իր օտարերկրեայ եղբայրներին, բայց չէ ճանաչում նրանց կարիքները, որովհետև ճիշդ կերպով ծանօթ չէ նրանց դրութեան հետ:

«Մշակը» իրան վաղուց նպատակ էր դրել ծանօթացնել երեք երկիրների հայերին իրանց թէ տնտեսական, թէ մտաւոր և թէ բարոյական փոխադարձ դրութեան հետ, աչքի առաջն ունելով, որ միայն այն ժամանակ կարելի է միմեանց օգնել, երբ միմեանց դրութիւնը ճանաչում են: Բայց ոչ մի տարի այդ նպատակը մեզ այնքան չաջողվեցաւ, որքան անցեալ 1879 թվին: Մանաւանդ մեծ կարևորութիւն կար ծանօթացնել Ռուսաստանի հայերին իրանց Թիւրքաց և պարսից եղբայրների դրութեան հետ, որովհետև ռուսաստանցին քաղաքակիրթ պետութեան մէջ ապրելով, ուրեմն աւելի ազատ, ապահով, երջանիկ և հարուստ լինելով՝ աւելի էլ կարող է օգնել միւս երկիրների իր ցեղակիցներին: Ռուսաստանցի հայը ունի դպրոցներ, աւելի ծանօթ է մանկավարժութեան հետ,—ուրեմն հարկաւոր ժամանակ կարող է թէ մանկավարժական ծրագիրներով և թէ պատրաստ դասագրքերով օգնել իր Թիւրքիացի և պարսկաստանցի եղբայրներին: Ռուսաստանցին աւելի հարուստ է, ուրեմն հարկաւոր ժամանակ կարող է օգնել նիւթական միջոցներով էլ միւս երկիրների հայոց դպրոցներին և ընկերութիւններին... և այլն:

Անցեալ 1879 թվին «Մշակը» իր թէ առջնորդող, թէ բանասիրական յօդուածներով, թէ Թիւրքիայից և Պարսկաստանից ստացված թղթակցութիւններով աշխատեց իր կարողութեան չափ ծանօթացնել ռուսաստանցի հայերին Թիւրքիայի և Պարսկաստանի հայերի դրութեան հետ:

«Մշակի» ութ տարվայ գոյութեան ասպարիզում դա մի նոր բայլ էր դէպի առաջ: Որքան այդ ուղղութեան մէջ մեր արած ջանքերը մեզ աջողվեցան—թող այդ մասին դատէ անկողմնապահ ընթերցողը:

Թէ այլ և այլ ազգերի և թէ զանազան երկիրներում բնակվող մի և նոյն ազգութեանը պատկանող անդամների միմեանց վերաբերութեամբ մարդասիրական գործը խղճմտաբար և գիտակցական կերպով առաջ տանելու համար պէտք է նախ և առաջ միմեանց ուսումնասիրել և ճանաչել: Այդ աշխատանքը կարող է և պէտք է յանձն առնէր իր պարտքը ճանաչող լրագրութիւնը:

Այդ ուղղութեան մէջ, որքան դեռ ևս պակասաւոր լինէր մեր յանձն առած գործը, մենք այնուամենայնիւ վստահութեամբ կարող ենք ասել, որ «Մշակը» և նրա խմբագրութեան անդամները աւելի արեցին, քան թէ մի որ և է ուրիշ, անցեալ թէ ժամանակակից հայոց լրագիր կամ ամսագիր: Բացի Թիւրքիային վերաբերեալ անթիւ գրուածներից, որոնք տպվեցան մեր լրագրի մէջ, «Մշակի» գրեթէ բոլոր անդամների համերաշխ աշխատասիրութեան արդիւնքն եղաւ և մի հրապարակական դասախօսութիւն «Թիւրքաց հայերի անտեսական դրութեան մասին», որ կարդացվեցաւ անցեալ տարի Թիֆլիսի հայոց հասարակութեան առջև:

Բայց մի և նոյն ժամանակ մենք մեր լրագրի մէջ անտես չէինք առնում և մեր ներքին կեանքին վերաբերեալ հարցերը:

Նոյնը պէտք է անենք և ներկայ 1880 թվին:

Մենք միշտ մեր պարտքը կը համարենք ծանօթացնել հայերին նրանց եղբայրների դրութեան հետ, որոնք բնակվում են ուրիշ երկիրներում, բայց մի և նոյն ժամանակ երբէք անտես չենք առնի մեր կարողութեան չափ ընտանութեան տակ դցել և մեր ներքին կեանքին վերաբերեալ օրական հարցերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց Ծննդեան տօնի նախընթաց օրը, դեկտեմբերի 24-ին, երբ Թիֆլիսում պատահեց մեծ հրդեհ Սիօնական փողոցի վրա, Անանովի քարվանսարայում, նոյն գիշերը, ինչպէս հաղորդում են բրագիրները, ՔՈԻԹԱՑԻՍՈՒՄՆ էլ պատահեց մեծ հրդեհ: Այրվեցաւ խարազովի տունը, որի մէջ գտեղված էին՝ քաղաքային կլուբը, «Լիվադիա» հիւրանոցը, պ. Լօրդկիպանիձէի գրավաճառանոցը, իսկ ստորին յարկում կային սպիրտի պահեստներ: Հրաշէջ վարչութիւնը իր թոյլ միջոցներով, անզօր էր կրակի դէմ առաջն առնելու:

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ 24 դեկտեմբերին ԹԻՖԼԻՍՈՒՄ պատահած հրդեհի պատճառով կալանաւորված են մի Տէր-Օհանէզով և նրա գործակատար Արամով պարոնները, որոնց կասկածում են Անանովի քարվանսարային դիտմամբ կրակ դցելու մասին:

—

Շնորհակալութեամբ ստացանք Երևանից պ. Արդար Գուլամիրեանցից հրատարակված երկու օրացոյցներ ներկայ 1880 թվի համար: Օրացոյցներից մինը մեծադիր է և արժէ 30 և 35 կոպէկ, իսկ փոքրադիր օրացոյցը արժէ ամեն տեղ 15 կոպէկ: Օրացոյցները տպված են պ. Գուլամիրեանցի սեփական տպարանում, որ պարոնը նորերումս հիմնել է Երևանում: Օրացոյցների հետ տարածվում է «Փարոսի» յայտարարութիւնը Ս. Նաղարեանցի պատկերով: Փոքրադիր օրացոյցը ունի երկու պատկերներ, այն է կ. Պոլսի Ներսէս պատրիարքի և պ. Մինաս Չերազի պատկերը: Մեծ օրացոյցն էլ ունի պատկերներ:

—

Դեկտեմբերի 30-ին պ. Ս. Մանդինեան կարդաց Արծրունու թատրոնում մի դասախօսութիւն «Հայաստանի մէջ իր արած ճանապարհորդութեան տպաւորութիւնների մասին»: Թէև թատրոնը լի չէր, բայց դարձեալ բաւական շատ ժողովուրդ կար: Պարոնի դասախօսութեան մէջ մենք ոչինչ նոր բան չը լսեցինք Հայաստանի մասին, բայց ուրախ ենք որ պ. Մանդինեան որպէս ականատես Թիւրքաց հայերի դրութեան, հաստատեց այն բոլորը, որ մենք ութ տարի շարունակ հաղորդում էինք մեր լրագրի մէջ Թիւրքաց Հայաստանի մասին, հաստատեց նոյնպէս և այն տեղեկությունը կունենամ, որ այս տարվայ մէջ մի հիւանդ պակաս կունենամ....

***

Բժիշկ Բաբայեանը և նրա պէսները չեն մտածում որ լրագիրը ոչ թէ միայն հասարակ մահկանացուին բայց և գուցէ նրա պէս գիտնական բժշկի համար նոյնքան հարկաւոր է որքան հիւանդի համար բժշկին դիմել....

Բայց ոչ, նրանք կարծում են որ լրագիրը չուայլութիւն է և դեռ մեծ բարերարութիւն են անում խմբագրին, բարեհաճելով գրվել նրա լրագրին:

Կոչկակարին չէ կարելի դիմել կլուբում և ասել նրան—«Շատ ուրախ եմ որ ձեզ այստեղ պատահում եմ. խնդրեմ ոտքիս չափը առէք և կոշիկ կարեցէք ինձ համար:»

Իսկ խմբագրին այդ կարելի է ասել:

***

Խմբագիրը, մանաւանդ հայ խմբագիրը, պէտք է անվարձ աշխատէ, իր գրպանից տարվայ վերջը լրագրի դէֆիցիտը ծածկէ, ընդհանուր հասարակական չահերի վրա գիշեր ցերեկ մտածէ, մաշվի,—և դարձեալ նա ոչ մի տեղ հանգստութիւն չունի, նա ամեն տեղ հասարակութեան ստրուկ, ծառայ է, ոչ մի տեղ նա մասնաւոր մարդ չէ, չէ կարող զբօսնել, հանգստանալ, զուարճանալ....

—Ես նրան տասը բուբլի եմ տալիս տարեկան, մտածում են Բաբայեանները, ուրեմն ամեն տեղ կարող եմ ձանձրացնել նրան....

Բայց պ. Բաբայեան, դուք ոչ միայն Թիֆլիսում, որտեղ ձեր չորերը երևի Դիւրանին կամ Մօսին էք պատիրում և մի ձեռք չորի համար «Մշակի» բաժանորդագնից շատ աւելի թանգ էք վճարում, երևի մի ութսուն, հարիւր բուբլ էք վճարում մի ձեռք չորի համար, բայց և երևի ձեր Աէքսանդրապօլումն էլ, որտեղ ֆրանսիացի երևելի դերձիկներ չը կան, երևի երբէք չէք համարձակվի ձեր դերձիկին փողոցում կամ կլուբում դիմել և այնտեղ պատիրել նրան ձեր չորերը....

***

Գոնէ այնքան մարդասիրութիւն ունենար մեր ինտելիգենցիան որ նայէր խմբագրի և գրողի վրա էլ, ինչպէս մի հասարակ փ ե շ ա ք ե ա ր ի վրա ու մտնէր նրա խեղճ խ ա ն ո ւ թ ը.... Այն ժամանակ և այնտեղ նրանից կարող էիք պահանջել որ նա իր փ ե շ ա ք ը կատարի ու ձեզ ծառայի ինչպէս և ես, փոքրիկ ֆելիետոնիստս, երբ ճշմարիտ հիւանդ կը լինեմ, կը մտնեմ բժշկի խ ա ն ո ւ թ ը ու կը պ ա հ ա ն ջ ե մ նրանից որ նա բժշկէ ինձ, ծառայէ ինձ....

Բայց իսկապէս ոչ բժիշկ Բաբայեան, ոչ էլ ուրիշները մեղաւոր չեն որ մենք ամենքս այդքան անփոյթ կերպով ենք վերաբերվում դէպի մեր հասարակական պարտաւորութիւնները և դէպի ուրիշների իրաւունքները.... Մեր նախկին հայ խմբագիրները իրանք են փչացրել հասարակութիւնը, իրանց անձը ամենքի առջև ստորացնելով և իրանց անուան պատիւը չը պահպանելով: Հայ խմբագիրը ամենքի առջև մ ի մ օ ս ո ւ թ ի ւ ն էր անում, ամենքի ծաղրածութեան առարկայ էր լինում, ամենքը նրա գլխին խփում էին.... Ցեղոյ որպէս առանձին չնորհ, կամ առանձին ուշադրութիւն խմբագրին փողոցում պատահելիս ինքնահաւան հայ վաճառականը կամ աստիճանաւորը բարձր ձայնով կանչում էին.

—Տօ, Պողոս, ինձ այս տարի բաժանորդ գրիր քո լրագրին.... Չը մոռանաս.... Հիմա փող ուզում ես, տամ.... Թէ չէ՝ ուրիշ անգամ կը մոռանամ.... Հը, վեր առ.... ինչ ես քրքրվում...

Եւ խմբագիրը ստորանում էր և վեր էր առնում:

***

Եւ այդ տեսակ ա ն փ ո յ թ վերաբերվելը դէպի իր հասարակական պարտաւորութիւնները և ուրիշի իրաւունքները, այն ինչ որ ռուսները այդպէս գերեցիկ կերպով անուանում են «халатное отношеніе», նշմարվում է մեր ամեն հասարակական գործողութիւնների մէջ և ոչ թէ միայն լրագրութեան ներկայացուցիչների վերաբերութեամբ:

Նայեցէք ձեր չորս կողմը.... Ռուսումնարան, Դուման, հոգաբարձութիւն, կոմիտէներ, զանազան ընկերութիւններ, զանազան պաշտօնավարութիւններ և այլն և այլն....

Եթէ ինձ կասեն որ ես չափից դուրս խիստ եմ վերաբերվել դէպի այնպիսի անչնչան անց.ք, ինչպէս բժիշկ Բաբայեանի վարմունքը խմբագրի հետ, ես կը պատասխանեմ՝ մինչև որ մենք խիստ չը վերաբերվինք դէպի հասարակական պարտաղանցութեան ամենաանչնչան երևոյթները, երբէք չենք հասնի և աւելի նշանաւոր և բարձր գործերում մեր պարտաճանաչութեան խղճմտաբար կերպով հասկանալուն:

Այն մարդը որ չէ ճանաչում իր պարտաւորութիւնները և ուրիշի իրաւունքները հասարակ քաղաքավարական յարաբերութիւնների մէջ, կեանքի ամենօրեայ միմեանց մէջ ունեցած յարակցութիւնների մէջ,—նա պարտաղանց կը լինի և յանձն առած ծառայութեան, պաշտօնավարութեան մէջ, նա անփոյթ կերպով, խ ա լ ա թ ա ւ ո ր, անխիղճ կերպով կը վերաբերվի և դէպի իր պաշտօնը որպէս մի հիմնարկութեան ծառայող, մի մասնաժողովի կամ յանձնաժողովի անդամ, վերջապէս որպէս քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչ, և այլն....

Եւ ճշմարիտ, լաւ նայեցէք, և կը տեսնէք որ այդ խ ա լ ա թ ա ւ ո ր, անփոյթ, այդ անխղճմտաւոր վերաբերվելը նշմարվում է մեր հասարակական բոլոր գործողութիւնների մէջ.

Փրակտանին ընտրում են մի բարեգործական ընկերութեան խորհրդի, կամ մի մասնաժողովի անդամ: Նա փքվում, ուռչում է որ նրան ընտրել են, նա չէ նայում իր յանձն առած գործի, իր պաշտօնի վրա՝ գործի դժուարութեան, մեծ պատասխանատուութեան կամ պարտաւորութեան տեսակէտից.... Ոչ, նրան զբաղեցնում, ուրախացնում, բաւականացնում է միայն պատիւ ու փառքի խընդիրը:

Նա գալիս է տուն ու պատմում է իր կնոջը և երեխաներին:

—Գիտէք, ինձ ընկերութեան խորհրդի անդամ ընտրեցին:

Առաջին անգամ նա ներկայ է գտնվում ընկերութեան նիստին, երկրորդ անդամ մի ամբողջ ժամով կամ երկու ժամով ուշանում է նիստի սկսվելուն,—իսկ յետոյ այլ ևս բոլորովին չէ գընում, հանգիստ տանը նստում ու իր ընտանիքի շրջանում թէյ խմում:

—Դու խօ նիստ ունէս այսօր, Սարգիս ջան, ասում է կինը իր ամուսնուն:

—Դրանց հէրն էլ անիծած, նրանց նիստն էլ, պատասխանում է մեր պարտաճանաչ հայ քաղաքացին: Ի՞նչ են տուել ինձ որ ինչ են պահանջում, տուելացնում է նա ինքնահաւան ձևով:

Մի քաղաքի Դումայի համար ձայնաւորների նոր ընտրութիւններ են լինում: Ամենքը աշխատում են ընտրվել փ ա ռ ք ի հ ա մ ա ր: Առաջին նիստին բոլոր ընտրվածները ներկայանում են: Մի քանի ժամանակից յետոյ էլ ոչ ոք չէ գալիս, նիստը գրեթէ երբէք չէ կայանում, ձայնաւորները սկսում են անփոյթ կերպով վերաբերվել դէպի իրանց պաշտօնը:

—Տօ՛, ինչի երէկ Դուման չեկար, հարցնում է մի ձայնաւոր միւսին փողոցում պատահելիս, դու որ գայիր, նիստը կը կայանար, թէ չէ քսան և երեք էինք, մէկը պակաս էր....

—Վ՛ա, օրնուած, չէիր կարող դռնապանին իմ ետեւից ուղարկել. խօ գիտես տունս որտեղ է: Դրուսան էլ որ ուզում ես իմանալ, չարժէ Դումայի նիստերին ներկայ գտնվել, ժամանակի կորուստ է, ուրիշ ոչինչ....

Կամ շատ անգամ լսվում են այսպիսի խօսակցութիւններ:

—Վաղը չեմ գայ նիստին.... Վանիչկա, (դիմելով քարտուղարին կամ ուպրավայի անդամին), Աստուած կը սիրես, պրոտոկոլը ինձ մօտ ուղարկիր, ես տանը կը լինեմ: Թէ չէ մէկ էլ ով է այստեղ գալիս: Ինչ որ կը վճռեն, ես համաձայն եմ....

կութիւնները որ հաղորդված էին Գրիգոր Արծրունու անցեալ տարվայ դասախոսութեան մէջ, Պ. Մանդինեանը հաստատեց թէ հայերը սատիկ հարստահարված են թիւրքերից և քիւրդերից, թէ Անգլիան աւելի համակրում է քիւրդերին քան թէ հայերին։ Ուշադրութեան արժանի է դասախօսի հայեացքը այն երևոյթի վրա թէ ռուսաց կառավարութիւնը արգելում է թիւրքաց հայերին գաղթել դէպի ռուսաց սահմանները։ Հայերը Թիւրքիայում, ասեց դասախօսը, համակրում են Ռուսաստանին, այդ գիտէ ռուսաց կառավարութիւնը բայց եթէ նրանք գաղթեն դէպի ռուսաց սահմանները, այն ժամանակ նրանց տեղը թիւրքաց Հայաստանի մէջ կը բռնեն թիւրքերը կամ քիւրդերը, և դա կը լինի ընդդէմ Ռուսաստանի չահերին, որովհետև այն ժամանակ Ռուսաստանի սահմանակից երկիրներում կը բնակվեն ոչ թէ բարեկամ քրիստոնեայ հայերը, բայց թշնամի թիւրք և քիւրդ տարրերը։ Ուսումնարանական գործը թիւրքաց հայերի մէջ, բացի «Արարատեան» և «Դըպրոցասիրաց-Արևելեան» ընկերութեան դպրանոցներից, դասախօսը չատ անսխիթար է համարում։ Նա գովեց միայն արդ երկու ընկերութիւնների գործունէութիւնը դպրոցական ասպարիզում և յորդորեց հասակարութիւնը չը խնայել իրանց նուէրները յիշեալ ընկերութիւններին, որոնց ձեռքում Ռուսաստանի հայերից ստացված փոդերից ոչ մի կոպէկ ապարդիւն կերպով չէ կորչում։ Հասարակութիւնը ծափահարութիւններով վարձատրեց դասախօսին։ Դասախօսութեան ժամանակ Արծրունու թատրոնում չատ ցուրտ էր։ Թիֆլիսում տիրող անսովոր ցրտերի պատճառով անհնարին եղաւ լաւ տաքացնել դահլիճը։ Եթէ թատրոնը լի լինէր, ի հարկէ այդքան ցուրտ չէր լինի։ Նոյն ցրտի վրա գանգատվում են այժմ թէ հասարակութեան և թէ լրագրութեան մէջ և Ամարային թատրոնի այցելողները։

—

Վաղը, չորեքշաբթի օր, պ. Ա. Երիցեան կարդալու է իր դասախօսութիւնների շարունակութիւնը գործակատարների կլուբում։ Մուտքը լինելու է անվարձ, բայց ցանկացողները կարող են գալ տուփի մէջ իրանց լուման յոգուտ վանի սովատանջների։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 27 դեկտեմբերի (8 յունվարի։) Բայազէտի և Բասկլեան շրջաններում սովը սաստկացել է։ Դիարբէքիրի և Մօսսուլի մէջ թանգութիւն է տիրում։ անգլիական հիւպատոսները օգնութիւն են պահանջում։ Անգլիան դրամական օժանդակութիւն տուեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 դեկտեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալը։ Կանն, 27 դեկտեմբերի։ Կայսրուհին իրան փոքր ինչ աւելի կազդուրված է զգում։ աւելի քիչ է հազում, գիշերն աւելի լաւ անցկացրեց, երէկվանից աւելի քիչ քրտնեց։ երէկ երեկոյեան ջերմութեան աստիճանը 38 էր, իսկ երակի զարկը 98. այսօր առաւօտ ջերմութեան աստիճանը 37,4 է, իսկ երակի զարկը 100։

ՕԴԷՍՍԱ, 27 դեկտեմբերի։ Այսօր Օդէսսա քաղաքի 9-րդ թաղի (участокъ) հաշտարար դատաւորի մօտ քննվում էր «Гамелицъ» լրագրի խմբագիր Յէտերբաումի որդոց այն գործը, որ նրանք ունէին այստեղի բավվնի օգնական Մանդելկէրնի հետ, որը բազմաթիւ վկաների և գրաւոր հաստատութեամբ մեղադրում էր նրանց ամբաստանութեան մէջ։ Վճռվեցաւ հետևեալը։ որովհետև Տատարբունարի կեղծ թղթակցութեան հեղինակը, որը պատճառ եղաւ «Гамелицъ» լրագրի ժամանակաւորապէս արգելմանը, էր նոյն իսկ բարբրի օգնական Մանդելկերն, այդ պատճառով էլ հաշտարար դատաւորը քննելով գործը արդարացրեց Յէտերբաումներին ամբաստանութեան մեղադրանքից, և նոյն իսկ մեղադրանքն էլ անբարեխիղճ ճանաչեց։

ՄՕՍԿՎԱ, 28 դեկտեմբերի։ Մոսկվայում պոլիցիան գտաւ ռուսերէն և մի ինչ որ օտար լեզուով գրած յեղափոխական յայտարարութիւնների պահեստ, որի մէջ կային նոյնպէս և գալվանական բատտարէաներ։ կալանաւորված է կոշտ կոպիտ քաթանից կարած մշակի շապիկ հագած մէկ մարդ։ նրա մօտ գտնվել է 1200 ռուբլ։

ԲԵՐԼԻՆ, 27 դեկտեմբերի (8 յունվարի։) Այստեղ կատակերգութիւն է համարվում այն խօսակցութիւնը, որ տեղի է ունեցել Փարիզում, Էլիսեան պալատի ընդունելութեան միջոցին գերմանական դեսպանի՝ Հօհենլոէի և Ֆրէյսինէի մէջ։ Ցիրաւի Բիսմարկը և Հօհենլոէ սաստիկ տհաճութիւն են ցոյց տալի և բոլորովին ապշած են ֆրանսիական ներկայ կարինէտի նշանակվելու մասին։ Պատմում են որ իբր Բիսմարկն ասած լինի հետևեալ խօսքերը։ «Պարոն Դամբէտտա ապացուցեց, որ նանշանաւոր կազմակերպող է, ես վախենում եմ թէ մի գուցէ նա կանգնած է այն ճանապարհի վրա, որով նա կազմակերպում է ֆրանսիական հանրապետութեան անկումը։»

Կ. ՊՕԼԻՍ, 27 դեկտեմբերի (8 յունվարի։) Բ. Դրան վերջին յայտարարութիւնը, որը Մուխտար-փաշան յայտնել է ալբանական դաշնակցութեանը, դաշնակցութեան առաջնորդ Իսուֆ-բէյը յայտնել է հետևեալը։ դաշնակցութիւնը մտադիր է պաշտպանել իր նախկին որոշումը—ընդդիմադրել, որ Գուսինեան և Պլաւեան նահանգների շրջականերում ոչինչ հողային զիջումն չը լինի յօգուտ չէրնոգորցոց։ Դաշնակցութիւնը հանդէս գուրս բերեց 6,500 մարդուց կազմված մի գլնված բանակ։

ՎԻԵՆՆԱ, 27 դեկտեմբերի (8 յունվարի։) Իտալական կաբինէտը յայտնեց Վիէննայի իտալական դեսպան Բօբիլանտին, որ նա ներկայացնի Հայմէրլէին Միրրիանի անցքի բացատրութիւնը։ Բօբիլանտ կատարեց այդ յանձնարարութիւնը։ Հայմէրլէ յայտնեց, որ նա բաւական է իտալական դեսպանի տուած բացատրութիւնով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 92 ր. 50 կ., երկրորդ 62³/₈ ր., երրորդ 92³/₄ ր., չորրորդ 92¹/₈ ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 231 ր. 50 կ., երկրորդ 226 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր. 25 կ., ոսկի արժէ 7 ր. 84 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25³/₁₆ պէնս. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 214 մարկ, Փարիզի վրա 265 ֆրանկ 50 սանտիմ։ Տրամադրութիւնը խաղաղ է։

ՄՕՍԿՎԱ, 29 դեկտեմբերի։ «Московскія Вѣдомости» լրագրի հաղորդած այն լուրը, որ իբր մի մարդ են կալանաւորել, որի մօտ գտեն թէ ես ինչ գործով եմ պարապում և ինձ ոչ մի կուսակցութեան չը պատկանող մտնաւոր մարդ են կարծում։

Ներկայացումն սկսվեց։ Ադամեանը կոյրի դեր էր խաղում։ Նրա դուրս գալուն պէս կոմիտէտի լօժայից ծափահարութիւններ սկսվեցան։ Հէնց որ Ադամեանը բաց արաւ բերանը, կոմիտէտը սկսեց լայ լինել.... Նրա օրինակին հետևեցին բոլոր տիկինները և օրիորդները.... Ցանկարծ զգում ենք թէ լօժաներից անձրևի պէս մի բան սկսեց կաթել բազկաթոռների մէջ նստածներիս վրա։ Շատերը կարծեցին անձրև է.... բայց դրանք մեր քնքոյշ սեռի գեղեցիկ աչքերից թափվող արտասունքներն էին։ Իմ հարևանը դուրս եկաւ դահլիճից և վերադարձաւ անձրևակալը ձեռին։ Նա բաց արաւ իր անձրևակալը, և իսկոյն ամենքս մին միւսի ետևից հետևեցինք նրա օրինակին։ Շուտով արտասունքները այնքան չատացան որ ստիպվեցանք կալոշներս հագնել։

Բայց արտասունքներից գոյացած հեղեղը հետզհետէ բարձրանում էր....Նա սպառնում էր հասնել մեր աթոռների բարձերին։ Շուտով մենք ստիպվեցանք բարձրանալ բազկաթոռների մէջքի վրա, ոտները դնելով նստարանի կաչու բարձի վրա.... Հեղեղը հետզհետէ բարձրանում էր և երրորդ գործողութեան մէջ արդէն ճշմարիտ սպառնալի և վտանգաւոր դարձաւ.... Ջուրը լցրեց օրկէստրը։ Երաժիշտների կառավարչի, պ. Տրուֆիի գլուխն էր երևում միայն ադի ջրի միջից.... Ավքները արդէն անցնում էին կոմիտէտի լօժայի ափերից....

Չորրորդ գործողութեան մէջ բերեցին վերջապէս պ. Պալմի կարգադրութեամբ երկու փոքրիկ նաւակներ և մի պօմպ, ջուրը դուրս թափելու համար։ Այդ ժամանակ երաժիշտները և պ. Տրուֆի արդէն անհետացած էին ավքների մէջ.... Միայն կօնտրբասի ծայրն էր երևում.... Իսկ պ. Ադամեանը միակ էր որ չէր նկատում աղէտալի անցքը, որովհետև կոյր էր....

Ներկայացումն վերջացաւ և բոլոր հանդիսականները, կատարելապէս թաց, մեծ դժուարութեամբ երկու նաւակների օգնութեամբ կարողացան հերթով դուրս գալ թատրոնի դահլիճից։ Մի քանիսները դուրս գալով գլխերվայ ցուրտ օդը, իսկոյն սառեցան....

Ասում են որ մի քանի զոհեր էլ եղան....Մարդիկ սառած մնացին.... Ուրեմն ահա զոհեր կոմիտէտի անզգոյշ վարմունքի, որ տալիս է այդ տեսակ արտասովալի պիէսաներ ձմռվայ ցրտերի ժամանակ։

***

Դեկտեմբերի 30-ին Ս. Մանդինեանի դասախօսութիւնն էր Հայաստանի ճանապարհորդութեան վրա։ Դասախօսութեան մէջ յայտնվեցաւ որ ինքն Մանդինեանն էր ճանապարհորդել և ոչ թէ Հայաստանը։

Բայց ինչ հետաքրքիր բաներ պատմեց մեզ Մանդինեանը։ Էրզրումի մէջ կերակուրներ և խըմիչքներ այնքան զզվելի կերպով են պատրաստվում, որ դասախօսը ոչինչ ուտել և խմել չէր կարող։ Իր ամբողջ ճանապարհորդութեան ժամանակ նա, ինչպէս երևում է, ոչ մի տեղ չը կերաւ և չը խմեց, որովհետև այդ մասին բոլորովին չէ յիշում։ Ամբողջ Հայաստանում երկու ամսի չափ անօթի ճանապարհորդելուց յետոյ, վերջապէս կերակուրներ ընդունեց Ռուսաստան վերադառնալու ժամանակ պարսից սահմանի վրա գտնվող պարսից մի գիւղի մէջ։ Պ. Մանդինեանը պատմեց մեզ որ Մուշի կողմերում հայերը այնքան աղքատ են որ կին ու մարդը չատ անգամ երկուսով մի շապիկ ունեն, իսկ շատ անգամ հասակ առած օրիորդներ և երիտասարդներ բոլորովին առանց շապիկի են մանդալիս։ Բայց դուէ նրանք իրանց կաշին ունեն մարմնի վրա, իսկ պ. Մանդինեանը, ինչպէս ինքն պատմեց մեզ, չատ անգամ կաշուց դուրս էր գալիս.... Երևում է որ նա միայն այն ժամանակ կրկին իր կաշին մտաւ, երբ անցաւ ռուսաց սահմանը։ Ուրիշ զարմանալի բաներ էլ պատմում էր դասախօսը Հայաստանի վրա։ Ես միշտ կարծում էի որ Հայաստանում և ամենաարօտ երկիրներում ձի կամ ջորի են հեծնում կամ ձիով և ջորիով են մանդալիս, իսկ պ. Մանդինեան հաւատացնում է մեզ որ նա չատ անգամ ձիու վրա էր մանդալիս....

Այդ տեսակ ճարպիկութեանը մինչև անգամ Գոդրֆրուա ցիրկի անդամներն էլ չեն հասել....

Մի ուրիշ զարմանալի բան։ Ամեն տեղ լուրերը տարածվում են, իսկ Էրզրումի մէջ, պ. դասախօսի ասածով, լուրերը չեն տարածվում, այլ մատն են գալիս։

«Երբ ես հասայ Էրզրում, ասում է Մանդինեան, քաղաքում լուրեր էին մանգալիս որ չուտով պէտք է գայ Հայրիկը և այլն....»

Զարմանալի երկիր է, ճշմարիտ, այդ Հայաստանը՝ ամեն բան նրա մէջ տարօրինակ է.... Մարդիկ մատն են գալիս ձիերի, ջորիների և էշերի վրա, իսկ լուրերը քաղաքի փողոցներում են մանդալիս....

Երբ որ Անգլիայի ջանքերով ըէֆորմներ կը մտցնվեն Հայաստանում, երկիրը կը բարեկարգվի, քանի մի երկաթուղիներ կը շինվեն երկրի մէջ,—երևի հետևակ լուրերը աւելի յարմար կը համարեն այնուհետև էլ ոտով չը մատն գալ, այլ կը սկսեն երկաթուղիներով ճանապարհորդել....

Վերջապէս դեկտեմբերի 30-ին եղանակը սառն էր, Արծրունու թատրոնը սառն էր և Մանդինեանի դասախօսութիւնը սառն էր....

***

Ընթերցողը յիշում է որ ես պատմեցի իմ վերջին ֆելիետոնում ինչպէս մի գիւղական հոգևորական հացի չարչիութեամբ է պարապում։ Ես յոյս ունէի որ վեհափառը կը պատժի այդ անարժան հոգևորականին.... Իսկ այժմ յայտնվում է որ նոյն բանը արել է Երևանի պատգամաւորների հետ Ս. Էջմիածնի ամենազօրեղ մարդը, Մանկունի եպիսկոպոսը....

Հարցնում եմ. երբ կազատվենք մենք Մանկունի եպիսկոպոսից, որ արդէն վաղուց է ատելի է դարձել ամբողջ ազգին....

Ասիացի

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ